

պէտք է տալ տարեկան 2 միլլիօն ֆունտ ստերլինգ (մօտ 20 միլլիօն ռսկի ռուբլի)։ Իսկ եթէ կամաւոր դպրոցներին էլ հաշիւ վերցնի տէրութիւնը, վերջինս պէտք է միանգամից վեր դնի 30—40 միլլիօն ֆունտ ստերլինգ (300—400 միլլիօն ռսկի ռուբլի)։ Իսկ դորանից զարհուրում են պահպանողականները, որոնց կուսակիցն է Սօլսբրի'ի մինիստրութիւնը։ Աղատամիտները դորանից խնդիր են չինոււմ, թէ պահպանողականները առհասարակ չեն ուզում ուսման ձրիութիւնը։ Դորանով մեկնւում են ալն տաք վիճաբանութիւնները, որ նորերումս տեղի ունեցան անգլիական պարլամենտում, որոնց ելքը ալն եղաւ, որ խնդիրը անորոշ ժամանակով լետաձգւեց։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՐԻՆԻՑ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կարէն, 17 փետրւարի 1890 թ.

Քաղաքիս մէջ Ազգային իշխանութեան ներքե կը գտնւին չորս վարժարան. Մարեան, Տ. Ազարեան երկսեռ ծաղկոցներու լատկացւած, Թարգմանչաց վարժարան իգական սեռի համար և Մալր դպրոցը՝ եկեղեցւոյ կից, որ 500 աշակերտ կը պարունակէ 11 դասակարգի (?) բաժանւած։

Սոյն վարժարանի տեսչութիւնը 1889 թ. սեպտեմբերի մէկին Պ. Գ. Զիլինկէրեանի լանձնւեցաւ, որ վեց-եօթը տարի առաջ բոլորովին անուս Տփլիսի դիմեց, մի քանի տարի հոն ուսաւ և վերադառնալով Տաճկաստան՝ Ալաշկերտի Միացեալ ընկերութեանց վարժարանները դասատու եղաւ, ալնուհետև ի Պալազիտ տէրութեան գանձապետ ըլլալէ վերջ՝ Կարին վերադարձաւ, որովհետև 1889 թ-ի նորակազմ ուսումնական հոգաբարձութիւնը անոր շնորհեց տեսչութիւնը, հրաժարեցնելով նախկին տեսուչ Նզիշէ էֆէ՝ Տուրսունեան։

Բայց ոչք են դասատուներն Մալր վարժարանին։

Ահաւասիկ ամենէն կարևոր և կենսական խնդիր մը մեր հալ տանեաց, մեր ուսանողաց համար։

Կաւկասեան հալք, որ կրթական խնդրոց մէջ մեզմէ խիստ եռանդուն են, որ և մեզմէ աւելի լուսամիտ են, չը պիտի դարմանան երբ իրանց լրագրաց էջերուն մէջ կարդան թէ՝ Կարնոյ ազգային վարժարանաց դասատուներուն մեծամասնութիւնը կը բաղկանալ 15 կամ 19 տարեկան թերուս պատանիներէ, որք 50, 60 և 70 դրուշ (ալսինքն հինգ կամ վեց ռուբլի) ամսականաւ կը դասախօսեն։

Մեր վարժարանաց խանգարման պատճառներէն մի քանին կը փորձեմ հոս թելել, բաց թողնելով աւելի ընդհանուրները, որ կապ ունին երկրիս ներկայ դրութեան հետ: 1880 թ. Գեր. Օրմանեան սրբազան կարճ առաջնորդ ընտրելով, իւր առաջին հոգն ըրաւ մեր վարժարանները բարեկարգ վիճակի մէջ դնելու, հրաժարեցուց Մալր վարժարանի տեսուչ Մ. էֆ. Աղապալեան, (որուն վերաջ քիչ վերջ պիտի խօսեմ), քիչ ժամանակամիջոցի մէջ չաջողեցաւ բոլոր վարժարանները միացնել և իւր տաժանելի պաշտօնավարութեան հետ ի միասին երկսեռ վարժարանաց թէ ընդհանուր տեսչութիւն ստանձնեց և թէ մի քանի դասախօսութիւնք ընելու լանձնառու եղաւ: Օրմանեան սրբազան աշնպիսի մի գեղեցիկ և օրինական ծրագրաւ կը կառավարէր վարժարաններն, որ կրնամ ըսել թէ բարոյական և թէ ուսման տեսակէտով նախանձելի վիճակ մ'ունէին:

1882-ի չրջանը չաջողապէս և գրեթէ առանց խոչընդոտի անցաւ. փորձառու անձերէ կազմած ուսումնական հոգաբարձութիւն մը, ընդ նախադահութեամբ Օրմանեան սրբազանի, ամեն ջանք ի գործ դրաւ նպաստելու թէ բարոյապէս և թէ նիւթապէս դպրոցին չառաջադիմութեան: Զաւակաց հալոբը վճարեցին թոշակներն, աղքատ տղալոց թոշակներն ալ ջօժարաբար հարուստները տւին:

Բայց 1883-ի չրջանը թերի մնաց. Սանասարեան վարժարանի հաստատումը Աղգապին դպրոցին առաջին և ամենամեծ հարւածը տաւ: Այս վարժարան ի սկզբանէ թէ գաւառներէն և թէ մեր քաղաքէն որբ և աղքատ մանկտիք հաւաքեց, բայց ընդհուպ ծրագիրը փոխւեցաւ. տակաւ առ տակաւ ձրի առնւած տղաքը հեռացուցին, իսկ թոշակաւորներու թիւը ստաւարացուցին. գրեթէ բոլոր հարուստները իրանց տղաքը փոխագրեցին Սանասարեան վարժարան՝ անխնայաբար վճարելով տարեկան 25-ական օսմ. ոսկի՝ մօտ 200 ռուբլի. հետեւաբար Աղգապին վարժարանը նպաստէ զրկւեցաւ, դասատուները եօթը ամսոյ չափ իրանց ամսականները չը ստանալով՝ հրաժարեցան, և քանդուեցաւ դպրոցը:

Մեր վարժարանաց խանգարման երկրորդ պատճառը:

Վերը քիչեցինք թէ՛ 80 թւին Մ. էֆ. Աղապալեան Մալր վարժարանի տեսուչ էր: Այս պարոնը բոլորովին անկարող և տգէտ ըլլալուն պատճառաւ, Օրմանեան սրբազան անմիջապէս զինք հրաժարեցուց պաշտօնէն: Թիշեալ էֆ.-ին հազիւ երկու տարւան ժամանակամիջոցի մէջ իւր մի քանի արբանեակներու միջոցաւ կրցաւ համոզել ընտանեաց հալոբը և 150 չափ տղաք անջատեց Մալր վարժարանէն, և իւր հաշուով մի առանձին դպրոց հաստատեց տան մը մէջ. քիչ մը դրամ և մէկ երկու դասատու ալ,—ահա դասախօսութիւնք սկսան:

Աղապալեան էֆ.-ին հարկ անհրաժեշտ է ծանօթացնել ձեզ. մի անձ. նաւորութիւն ինքնուս, բայց իւր մտքին մէջ իբր ֆրանսագէտ, փիլիսոփայ, իւր չրջանին մէջ պռօֆէսօր և միանգամաւն մասնա-

դէտ բնագէտ, ինչպէս որ իւր տգէտ արժանեակներն զինք կը կոչեն, որովհետեւ ալս էֆէնդին հրատարակած է մի բնագիտութեան ժողովածոյ կամ հաւաքածոյ, որ երբեք չը գործածւիր վարժարանաց մէջ և ընթերցող մը բնագիտութեան վերայ գաղափար մը չը կրնար կազմել:

Աղապալեան վարժարան, որովհետեւ ոչ կատարեալ ծրագիր և ոչ ալ դրամ ունի, դանձւած թոշակներն ալ աննշան դումարներ ըլլալով, մէկ երկու տարիէ ի վեր ելնմտացոյցը բաւական մեծ բաց մը կ'արտադրէր. հիմնադիրը պարտուց ներքեւ ճշշելով, դիմեց ազգ. իշխանութեան 89 թ. հոկտեմբերին, հնազանդութիւն և հպատակութիւն չափտնելով և իւր դպրոցին համար նպաստ մը խնդրեց, չափտարարելով որ, եթէ խնդրած նպաստը չը տրւի, պիտի հարկադրի իւր դպրոցը գոցելու:

Ազգ. ժողովը աւանց խնդիրը լուրջ խորհրդածութեան և գրեթէ ոչ ալ վիճաբանութեան առարկայ ընելու, ընդունեց երկու տարի նպաստել ալդ վարժարանին, նպաստ մը, որ թէ ապօրէն էր և թէ բոլորովին ապարդիւն: Ալդ. ժողովոյ անդամներէն միայն Կ. էֆ. Տ. Ազարեան, որ քաղաքիս մէջ նշանաւոր հանդիսացած է իւր տաղանդովն և շահած ժողովրդականութեամբ և միակ է իւր անկողնակալութեամբ, բողոքեց ազդու և իրաւացի բանիւք նպաստ չատկացնելու խնդրոյն դէմ, առաջարկելով ժողովոյ՝ միացնել Աղապալեան դպրոցը ազգ. վարժարանաց, և եթէ արժան կը տեսնուի՝ Աղապալեան էֆ.-ի ալ պաշտօն մը տալ: Բայց Քաղաքակ. և Աղդ. ժողովոց ատենապետք համախոր ուսումնական հոգաբարձութեան նորեկ անդամներու հետ, միահամուռ պատասխանեցին թէ՛ եթէ 150 աշակերտ մեր վարժարանաց վերայ բարդին, մէկ կողմանէ տեղու անձկութիւն պիտի պատճառէ, միւս կողմանէ մեծ ծախուց պիտի ենթարկուի ազգը:

Սույն պատճառաբանութիւն երկու կարևոր գաղտնիք կը պարունակէ իւր մէջ. ա. Երբ չիրաւի ազգ. վարժարանաց վերայ 150 աշակերտք բարդւին՝ տեղու անձկութիւնը վերջին ծաւր գգալի պիտի լինի, բնականաբար ալս պարագային ազգը պիտի պահանջէ իւր դպրոցներուն ամենէն շքեղը, հոգակապը և ընդարձակը, Հռիփսիմեանց վարժարանը, որ Սանասարեաններու չատկացւած է չնչին տարեգնոյ մը փոխարէն: Բայց մեր ժողովականաց շատերուն զաւակունք որովհետեւ ալդ Սանասարեան վարժարանը կը լաճախեն, չեն ուղեր Սանասարեան տեսչութեան փափուկ զգացումները վիրաւորել: Բ. եթէ Աղապալեան էֆ.-ին Ազգալին վարժարանը մոռ գտնէ, թէ նորընտիր տեսչին և թէ ուսումնական ժողովու հաշտոյն չը զար...

Մեր վարժարանաց խանգարման երրորդ պատճառը—երկրիս ընդհանուր դրութիւնը և մասնաւորապէս նախանձը ու անձնական խնդիրները. ալդ վերջիններու վերայ կանդ առնեմ:

Ատենօք Կ. Պօլիս ունէր երեսփոխանութեան անդամ Ստեփան էֆ.

Փափագեան անուանի մի անձ, որոյ կենսագրութիւնը մի քանի տարի լա-
աաջ Արփիարեան էֆ. ըրաւ «Արեւելքի» մէջ. — եռանդուն, գործօն, ուսնալ
մի երեսփոխան, երբ Ա. Պօլսոյ մէջ ընկերութիւն մը կը հաստատուի եղեր,
ամեն ճիշդ կը թափէ՝ կարեւր եղած միջոցներով նպաստելու. վարժարան
մը կը հիմնուի, ըստ ինքեան լանձնառու կը լինի ձրի դասախօսութիւնը
ընելու և ալն և ալն, բաց երբ գործը լառաջագիմնելու կը սկսի եղեր, դար-
ձնալ ինքն է, որ ամենամեծ հարւած մը կ'ուտայ եղեր զայն տապալելու:

Կարինն ալ բաւական ժամանակէ ի վեր ունի մի պատուհաս, Յ.
էֆ. Տ. Մեքիսէդէկեան անուամբ, ալժմ ատենապետ Աղղալին ժողովոյ,
Այս է ֆէն դին, որի աղգ. գործերու համար անձնւիրաբար աշխատելը կը
տեսնուի, կրթական խնդրոց մէջ կը ջանայ միշտ առաջին տեղը բռնել.
բաց երբ կը տեսնայ որ գործը լառաջագիմնելու վերայ է, դարձնալ ինքն
է որ առաջին հարւածը կ'ուտայ իւր երկու ուրիշ արքանակներու հետ,
որ միշտ իրմէ կը ներշնչուին: Ինչպէս որ տեսնուած է միշտ, այս մարդ չը
փափաքէր, որ Կարնոյ մէջ ուսումը ծաւալի և բնիկները կամ լարտաքուստ
եկող դաստոններն իրմէ աւելի ուսնալ կամ ֆրանսագէտ լինին, որ ինքն
ևս արդէն ինքնուս մը լինելով՝ ոչ ֆրանսիական գրականութիւնը սովորած
է և ոչ ալ կանոնաւոր խօսակցութիւն մը գիտէ, ոչ ալ ուրիշ ուսումներ.
նա քիչ շատ մարքենի լեզուն ուսումնասիրած է, բաց գրագէտ չէ:

Նախանձը և եսականութիւնը միացեալ, զինքը գրգռած են աղղե-
ցութիւն բանեցնել այն անձանց վերայ, որք ուսնալ են, բնական է թէ
սոքա ևս չը պիտի հանդուրժեն աղղալիս տգէտ և գոռող անձնաւորու-
թեան մը արարքներուն. և ալն վարժապետներն, որ տգէտ են՝ կրնան
մշտնջենտպէս իրանց պաշտօնը վարել ստորնաբար խոնարհելով, ի սէր
իրանց հացին:

Իւր ճարտասանութեամբ աղղալին պաշտօններու մէջ լաջողած է
միշտ տեղ գրաւել և իւր ստացած աղղեցութեան շնորհիւ Տ. Մեքիսէդէ-
կեան էֆ. 1879-ին աքսորեց (բացարձակ սուտ ամբաստանութեամբ) Կար-
նոյ Ընկերական վարժարանի տեսուչ Յովսէփ էֆ. Գասպարեանը, ալժմ
տեսուչ Գեհրանի Ընկեր. վարժարանին:

1880-ին դարձնալ մեր Ընկեր. վարժարանի ¹⁾ տեսուչ Գրիգոր էֆ.

1) 1872 Թւականին Հաստատեցաւ Ընկեր. վարժարանը, ունէր մի ա-
ռանձին Հոգաբարձութիւն, բոլորովին անկախ աղղալին որ և ինչ իշխանութենէ
կամ Հեղուկութենէ. Հոս կ'ընդունէին այն աշակերտք, որք, ըստ կարգի, կը վճարէ-
ին տարեկան 3 էն 8 օսմ. ոսկի, և քանի մը հարուստներ սան ալ ունէին այս
Հաստատութեան մէջ: Այս դպրոցի ամբողջ շրջանը գրեթէ 10 տարի տնեց, բայց յու-
սացած օգուտը չը կըցաւ մատուցանել աղղին, որովհետև շնորհիւ Տ. Մեքիսէդէկեան
էֆ.-ի ըրած ջանքից և ցոյց տուած փոյթեռանդն ոգւոյն, սոյն Հաստատութեան
տեսուչներն 9 ամիսը մի անգամ կը Հրաժարէին և այսպէս ամեն տեսուչ Հաղիւ Թէ իւր
ծրագիրը կազմ վիճակի մը մէջ կը դնէ, ահա երկրորդ տեսուչ մը, որ ի Հիմանց կը

Սանդալճեանը (քանակագէտ mathématicien, ուսումնաւարտ ի Պրիւսէլ և Պարիզի մէջ ալ ուսած) իւր հրաժարականը աւաւ, Տ. Մեւքիսէդէկեան էֆ. ի ըրած անտեղի և անհիմն դիտողութիւններէ զզւելով, Միացեալ ընկերութիւնք անմիջապէս զինք Կիլիկիոյ վարժարանաց տեսուչ կարգեցին, 20 ոսկի ամսականաւ:

Սանդալճեանի մեկնելէն վերջ, Կարին ժամանեց պարոն Պօղոս Դել-իեան (աղա Սանասարեանի սանը). սա ևս քանակագէտ, ի Ստրասբուրգ ուսումնաւարտ:

Մեր քաղաքին մէջ հազիւ թէ լսեցինք իւր համբաւը և ճանչցանք զինք Սանասարեանի հիմնարկելիք վարժարանին տեսուչ, երբ ազգ. վարժարանաց հոգաբարձութիւնը դիմեց պ. Դելիեանի աղաչելով, որ ձրիաբար քանակագիտութիւն ուսուցանէ աշակերտաց, Պ. Դելիեան սիրով ընդունեց ալս առաջարկը, և առաջին դասախօսութեան միջոցին, ուր աշակերտաց քանակագիտութեան նախագիտելիքը կը պարզէ պարզ և ժողովրդական լեզուաւ, ալդ պահուն Տ. Մեւքիսէդէկեան իսկ ուրիշ մի անձի հետ Մալր դպրոցին սրահը կանգնած կը հեգնին պ. Դելիեանի տւած բացատրութեանց վերաբ. Զալս կը լսէ պ. Դելիեան, կը ձգէ անմիջապէս սրահը և ալ ևս չը դասախօսեր: Նա Ընկեր. վարժարանին միայն վեց ամսու չափ դասախօսեց ամսական 7 լիւրալ ստանալով:

Պ. Դելիեան որովհետև ազգ. իշխանութեանց հրամանին անսալու պարտաւոր չէր և որովհետև Տ. Մեւքիսէդէկեանի բարի քմաց համեմատ չ'ուզեց չարժիլ, այս վերջինը զպարացած, «Ուղևոր» ստորագրութեամբ ալնչափ խիստ զրպարտիչ հրատարակութիւնք ըրաւ լրագրաց մէջ, որք մինչև բարերարին ականջը հասան: Աղա Սանասարեան ալդ սուտ հրատարակութեանց հաւատք ընծալելով, տեսչական պաշտօնէ հրաժարեցուց պ. Դելիեանը, լանձնելով զալն պ. Յ. Մադաթեանի և սպառնալով միանգամայն զինքը դպրոցէն արտաքսել:

Այս պարագային, պ. Յ. Մադաթեան աղնւաբար վարեցաւ իւր ընկերոջ նկատմամբ և ընդհուպ համարձակեցաւ մեծ ազգեցութիւնք բանեցնել, կը հրամայէր իբրև տէր իշխող:

Ո՞ր զգալուն սիրտ պիտի կրնար տոկալ այս ստորնայման, ալն ևս Դելիեան, որ վնահանձն էր, օժտեալ ազնւական և բարձր ձիրքերով, բալց ծաղալեղ ժողովրդական:

Ո՞հ. անկարելի էր տոկալ. շատ չը տեսց և չարաբաստիկ օր մը լանկարծամահ եղաւ կաթւածէ:

Փոխէ Ծրագրին ձեւը և գասախօսութիւնք կը փոփոխէ ըստ հաճոյն. գրեթէ տեսուչներէ զաա Էւրաքանչիւր ասորի չորս կամ հինգ գասատու և վեց կառավարէչ կը փոխէր: Վերջապէս Որմանեան սրբազան այս վարժարանին բաղդը Տ. Մեւքիսէդէկեանի ճիւղաններէն Հապիւ կըցաւ ազատել, 1883-ին, Ընկերական վարժարանը միացնելով Ազգ. վարժարանաց:

Վերջապէս Տ. Մելքիսէդէկեան էֆ. 1889-ին հրաժարեցուց (ներշնչելով) նորակազմ ուսումնական հոգաբարձութիւնը՝ Կարնու ազգ. վարժարանաց ընդհանուր տեսուչ Տուրսունեան Եղիշէ էֆ.-ին, որովհետեւ 1880—1889 թւականն ալս էֆէնդին չը համակերպեցաւ իւր բարձր հրամաններուն, մէկ խօսքով չ'ուզեց ստորնաբար զինքը չորոքորթել, ուրիշ դասատուաց պէս սոգիտութեամբ օժտւած չը լինելուն համար Գանիցս խեղճ Տուրսունեանը հրաժարեցուցին ալս պատճառաւ, բայց ժամանակ մը անցունելով, երբ կը նշմարէին թէ՛ ալգ անձնաւորութեան պէտքը մի քանի տեսակէտով զգալի էր, կրկին տեսուչ կը կանգնեցնէին։ 1888-ին ալ հրաժարեցուցին, բայց ալս անգամ վարժարանին ուսանողը մեծ աղմուկ չարուցին, առ ժամանակեալ ուսումնական հոգաբարձ. Տ. Մելքիսէդէկեան և Մ. Պալլարեան էֆէնդիներէ՝ պահանջեցին իրանց տեսուչը, որ տարի մը ես պաշտօնավարեց։ Այս էֆէնդիներն չը խեղճացին փոքր ինչ զրպարտել զՏուրսունեան. բայց չեմ կրնար զարմանալ չը լալտնել, որ ազգ. վարժարանաց մէջ եօթը-ութը տարիէ ի վեր մի քանի դասատուներ կան, որք ի միջի ալ զեղիտութեանց՝ բռնւած են փոփոխական (?) հիւանդութեամբ և ալս կարգի դասատուներն ծանօթ են իրանց, բայց չեն ուզեր զպչիլ։

Զը մոռնամ ըսել թէ պ. Տուրսունեան Եւրոպիոյ մէջ սովորած էր լատիներէն, իտալերէն, ֆրանսերէն, անպէս որ ալժամ մեր քաղաքին մէջ կրնամ ըսել թէ իրմէ աւելի լաւ ֆրանսագէտ մը չը գտնուիր։ Պ. Տուրսունեան, 10 տարիէ ի վեր, Կարնու կրթական գործերու մէջ միշտ ամենէն բարձր և կարևոր պաշտօններ վարելէ վերջ, Կ. Պօլիս վերադարձաւ և հոն Խասգիւղի Ներսէսեան երկսեռ վարժարանաց ընդհ. տեսուչ կարգեցաւ 12 ոսկի ամսականաւ։ Տ. Մելքիսէդէկեանի և նորընտիր ուսումնական հոգաբարձութեան իմաստակ անդամներու արժէք գնահատելու կարող կամ անկարող ըլլալին ապացուցանելու համար, ալս չափ միաշն ըսեմ, որ անցեալ տարի պ. Տուրսունեանին 4 ոսկի ամսական չափացուցած էին, միևնոյն անձը ալսօր ամսական 12 ոսկի կը ստանալ ի Կ. Պօլիս։

Ասկէ երկու տարի չառաջ պ. Միսակ Գալթանճեան, «Խիկար» ամսաթերթի միջոցաւ, Կ. Պօլսոյ թէատրոններու մէջ սովորած երգիծաբանական լեզուաւ և ոճով, մի. քանի խօսքներ հրատարակեց, որոց մէջ կը հարաւածէր մեր ազգ. իշխանութեանց անդամներն թէ՛ սոքա ծուլ են և չեն գործեր, թէ դպրոցներն հաւասարեցուցած են ախոռներու և ալլն, և ալլն, բայց եթէ զարմանալի պարագայ մ' ալ կա՝ սա է որ Պ. Մ. Գալթանճեան ի Կարին վերադառնալով, ջանաց ուսումնական հոգաբարձութեան անդամ ընտրուի և եղաւ. բայց փոխանակ մեր դպրոցներն աւելի բարեկարգ վիճակի մը մէջ դնելու, իւր «Խիկարի» մէջ նկարագրած ախոռներն հորթանոցի վերածեց, 70—80 մանկտի փոքր սենեակի մէջ լեցնելով։ Պ.

Մ. Գալթանճեանի կը բաւականամբ խորհուրդ տալով, որ գէթ աչտու
չետոյ ալ Տ. Մելքիսէդէկեանի օրգանը չը լինի:

Այս բարեկենդանէն լառաջ, երեկոյ մը, տեղիս «ուսեալներին» խումբը
կը խորհէր թէ Կարնոյ ժողովուրդը ինչ միջոցաւ զարմացնելու է: Շատ
մը վիճաբանութենէ վերջ, որոշեցին ազգասիրաբար մի ներկայացում տալ,
դպրոցին աղքատ տղալոց նպաստելու նպատակաւ: Ուստի դիմեցին կա-
ռավարութեան, որ բացարձակապէս մերժեց իրանց առաջարկը:
Յետոյ մէկը կ'առաջարկէ աչք խումբին, որ նախ իրանց մէջ հան-
դանակութիւն մ'ընեն և իւրաքանչիւր անձ աչք խումբէն երկ-երկու ոսկի
տալէն վերջ, սկսեն չետոյ դուրսէն ալ հանգանակութիւն ընել: Երբ երկ-
երկու ոսկի տալու առաջարկը լսեցաւ, հանգանակութեան խնդիրը
ձգեցին և խորհեցան ուրիշ բան, որ գործադրեցին, աչք է բարեկենդանի
երեկոներն խմբովին Տրապիզոնի օդի և Խարբերդի գինի վալելել, փոխա-
նակ աղքատ տղալոց նպաստելու: Պ. Մ. Գալթանճեան ազգասի-
րաբար չէր զլանար լաւ խնդկատակութիւնք և զաւելտներ ներկայաց-
նել՝ իւր ընկերները զւարճացնելու համար: Յիրաւի, բոլոր կարենցիք
աչք քէֆին համար զարմացան:

Վ. ԱՍՔԱՆԱԶԵԱՆ